



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ  
ՈՐՈՇՈՒՄ**

<< 27 >> 09 2012թ. N: 247-Ն ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՈՒՄ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅԱՆ  
ՈՐԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ԽՈՐՀՐԴԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ  
ԿԱԶՄԸ, ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 31-Ի N 204-Ա ՈՐՈՇՈՒՄՆ  
ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<հրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի <<բ>> ենթակետի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> ՆՀ-728 հրամանագրի 1.17-րդ կետի <<ա>> ենթակետի դրույթներով.

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում բուժօգնության որակի բարելավման խորհուրդ (այսուհետ՝ խորհուրդ):

2. Հաստատել՝

1) խորհրդի անհատական կազմը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) խորհրդի կանոնակարգը՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2009 թվականի օգոստոսի 31-ի <<Հայաստանի Հանրապետության առողջության առաջնային պահպանման ոլորտում բուժօգնության որակի ապահովման ռազմավարության իրականացման միջոցառումների մասին>> թիվ 204-Ա որոշումը:

4. Սույն որոշման կատարման հսկողությունն իրականացնում եմ անձամբ:

Ա. ԳԻՋԻՐՅԱՆ

Իսկականի հետ



ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՈՒՄ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

- Հովհաննես Հովհաննիսյան - ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ, նախագահ.
- Հայկուշ Ավետիսյան - ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի պետ, անդամ.
- Աշոտ Կուրդինյան - <<Գյումրու մոր ու մանկան ավստրիական հիվանդանոց>> փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրեն, անդամ.
- Արմեն Խաչատրյան - <<Զաջուռի բժշկական ամբուլատորիա>> փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրեն, անդամ.
- Եղիշե Խաչատրյան - <<Գյումրու ծննդատուն>> փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրենի ժ/պ, անդամ.
- Կարինե Տոնոյան - <<Գյումրու ինֆեկցիոն-հակատուբերկուլյոզային հիվանդանոց>> փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրենի ժ/պ, անդամ.
- Խաչատուր Կարապետյան - <<Գյումրու Գ.Գուլբենկյանի անվան վիրաբուժական հիվանդանոց>> փակ բաժնետիրական ընկերության տնօրեն, անդամ.
- Ռաֆիկ Խաչատրյան - <<Գյումրու <<Սամարիթեր>> հիվանդանոց>> փակ բաժնետիրական ընկերության տնօրեն, անդամ.
- Աշոտ Շահբազյան - <<Պաթոլոգո-անատոմիական լաբորատորիա>> փակ բաժնետիրական ընկերության տնօրեն, անդամ.
- Արմեն Իսահակյան - <<Գյումրու բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրենի ժ/պ, անդամ.

- Վալերիկ Շիրինյան - <<Գյումրու ուռուցքաբանական դիսպանսեր>> փակ բաժնետիրական ընկերության տնօրեն, անդամ.
- Արմեն Իգիթյան - Գյումրու << Ստոմա-Սթիլ>> սահմանափակ պատասխանատվության ընկերության տնօրեն, անդամ (համաձայնությամբ)
- Զառա Գևորգյան - <<Գյումրու Ն.Մելիքյանի անվան թիվ 2 պոլիկլինիկա>> փակ բաժնետիրական ընկերության ընտանեկան բժիշկ, անդամ.
- Մարիամ Հակոբյան - <<Գյումրու թիվ 1 պոլիկլինիկա>> փակ բաժնետիրական ընկերության ընտանեկան բժիշկ, անդամ.
- Անահիտ Բարխուդարյան - <<Միջազգային Կարմիր խաչի անվան պոլիկլինիկա>> փակ բաժնետիրական ընկերության ընտանեկան բժիշկ, անդամ.
- Տաթևիկ Հարությունյան - ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի առաջին կարգի մասնագետ, անդամ:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ  
ԱՇԽԱՏԱԿԱՌՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Խ.ՊՈՂՈՍՅԱՆ

Իսկականի հետ



## ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՈՒՄ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

#### 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում բուժօգնության որակի բարելավման խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչությանը (այսուհետ՝ Վարչություն) կից խորհրդատվական մարմին է, որի նպատակն է բարելավել մարզի բուժհաստատություններում մատուցվող առողջության առաջնային պահպանման (ԱԱՊ) և հիվանդանոցային ծառայությունների որակը:

2. Խորհրդի հիմնական խնդիրն է իրականացնել մարզի ԱԱՊ և հիվանդանոցային ոլորտներում բուժօգնության որակի ապահովման գործընթացների մշակման, իրագործման և շարունակական զարգացման ընդհանուր ղեկավարում և հսկողություն:

3. Խորհուրդն իր առջև դրված նպատակը և խնդիրներն իրագործում է մարզի ԱԱՊ և հիվանդանոցային հաստատությունների գործունեության կանոնավոր ստուգազննման, գնահատման և ԱԱՊ հաստատությունների որակի բարելավման խորհուրդներին (ՈԲԽ) ու հիվանդանոցների որակի վերահսկման հանձնաժողովներին (ՈՎՀ) գործնական աջակցություն ցուցաբերելու միջոցով:

#### 2. ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

4. Խորհուրդը կայացնում է որոշումներ և ներկայացնում առաջարկություններ մարզի առողջապահական ծառայությունների գործունեության վերաբերյալ՝ նպատակ ունենալով բարելավել մատուցվող ԱԱՊ և հիվանդանոցային ծառայությունների որակն ու արդյունավետությունը:

5. Այդ նպատակով Խորհուրդն իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) տեղեկատվական և անհրաժեշտության դեպքում, ուսուցողական աշխատանք՝ բուժօգնության որակին առնչվող նոր ազգային չափորոշիչների, նորմատիվային, հրահանգչական և խորհրդատվական նյութերի վերաբերյալ:

2) վերահսկում, ստուգազննում (մոնիտորինգի է ենթարկում) և գնահատում է մարզի ԱԱՊ և հիվանդանոցային հաստատություններում մատուցվող ծառայությունների որակը:

3) պահանջում, ստանում և վերլուծում է ստուգազննման միջոցով ձեռք բերված տվյալները, ամփոփում արդյունքները, ըստ այդմ՝ կայացնում որոշումներ:

4) որակի ստուգազննման և գնահատման հիման վրա առաջարկում/մշակում է ԱԱՊ և հիվանդանոցային ծառայությունների որակի բարելավմանն ուղղված հրահանգներ, ընթացակարգեր, միջոցառումներ և համակարգում է դրանց ներդնումը բուժհաստատություններում:

5) առաջարկում/մշակում է ԱԱՊ և հիվանդանոցային ծառայությունների բարելավմանն ուղղված տեխնոլոգիական փոփոխություններ և համակարգում է դրանց ներդնումը բուժաստատություններում.

6) որակի բարելավման բացահայտված կարիքներից ելնելով պլանավորում և ձեռնարկում է միջոցներ՝ ուղղված բուժանձնակազմի մասնագիտական կարողությունների զարգացմանը.

7) համակարգում է ԱԱՊ և հիվանդանոցային ծառայությունների ոլորտում առավել հաճախ արձանագրվող անցանկալի դեպքերի, բժշկական սխալների վերլուծության, նախականխման և շտկման աշխատանքները.

8) համակարգում, աջակցում և վերահսկում է ԱԱՊ և հիվանդանոցային հաստատություններում բուժօգնության որակի սահմանված ցուցանիշերի ստուգազննման, բուժաշխատողների կատարողականի, սահմանված չափորոշիչներին կլինիկական դեպքերի վարման համապատասխանության, պացիենտների բավարարվածության ուսումնասիրման, ինչպես նաև մատուցվող ծառայությունների որակի գնահատման այլ գործընթացները.

9) կանոնավոր կերպով ստանում և ամփոփում է որակի ստուգազննման և գնահատման վերոհիշյալ միջոցառումների արդյունքները և ըստ այդմ, մշակում և հանձնարարում է բուժօգնության որակի բարելավմանն աջակցող միջոցառումներ՝ հետագայում գնահատելով ձեռնարկված միջոցառումների արդյունավետությունը.

10) սահմանված կարգով և պարբերականությամբ առողջապահական վերադաս մարմիններին ներկայացնում է հաշվետվություն իր ենթակայության բուժհաստատություններում որակի գործընթացների վերաբերյալ:

6. Վարչությունը համակողմանիորեն աջակցում է Խորհրդին՝ տրամադրելով անհրաժեշտ տեղեկատվություն և ստեղծելով նպաստավոր պայմաններ՝ Խորհրդի արդյունավետ գործունեության համար:

### 3. ԽՈՐՀՐԴԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

7. Վարչության պետն ի պաշտոնե հանդիսանում է Խորհրդի նախագահ:

8. Խորհրդի կազմում ընդգրկվում են Վարչության աշխատակիցներ, մարզի առողջապահության համակարգում բուժօգնության որակի ապահովման համար պատասխանատու անձինք, շահագրգիռ կողմերի ներկայացուցիչներ: Խորհրդի աշխատանքներին կարող են հրավիրվել նաև հանրության ներկայացուցիչներ:

9. Խորհրդի անհատական կազմը հաստատում (փոփոխում) է մարզպետը:

10. Խորհրդի նախագահը Խորհրդի անդամներից նշանակում է Խորհրդի քարտուղար:

### 4. ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԸ

11. Խորհրդի գործունեությունն իրականացվում է նիստերի միջոցով:

12. Խորհրդի նիստերը հրավիրվում են հերթական/պլանային կարգով՝ առնվազն եռամսյակը մեկ անգամ:

13. Խորհրդի արտահերթ նիստեր կարող են հրավիրվել Խորհրդի նախագահի նախաձեռնությամբ, ինչպես նաև Խորհրդի անդամների 1/3-ի պահանջով:

14. Խորհրդի նիստն իրավագոր է, եթե դրան մասնակցում են Խորհրդի անդամների առնվազն 2/3-ը: Խորհրդի նիստերին կարող են մասնակցել նաև հրավիրված անձինք:

15. Խորհրդի նիստը վարում է Խորհրդի նախագահը, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ Խորհրդի որոշմամբ Խորհրդի անդամներից մեկը:

16. Խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք: Ձայնի (քվեարկության իրավունքի) փոխանցումը մեկ այլ անձի չի թույլատրվում:

17. Խորհրդում որոշումներն ընդունվում են նիստին ներկա Խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում Խորհրդի նախագահի ձայնը վճռորոշ է:

18. Խորհրդի նիստերն արձանագրվում են: Արձանագրությունը ստորագրում են նիստին մասնակցած Խորհրդի անդամները:

19. Արձանագրության մեջ որպես կանոն նշվում են՝

- 1) նիստի ամսաթիվը և վայրը.
- 2) նիստին ներկա անդամները.
- 3) նիստի օրակարգը.
- 4) նիստի ընթացքում հնչած ելույթների համառոտագրերը.
- 5) քվեարկության դրված հարցերը և քվեարկության արդյունքները.
- 6) նիստում ընդունված որոշումները:

20. Խորհրդի յուրաքանչյուր նիստի սկզբում քննարկվում է նախորդ նիստում կայացված որոշումների կատարողականը և տրվում են համապատասխան հանձնարարականներ:

21. Նիստի որոշումներն ուղարկվում են մարզային բուժհաստատություններին՝ ըստ պատկանելության:

22. Կախված Խորհրդի ընդունած որոշումների բնույթից՝ Խորհրդի նախագահը կարող է դրանք ներկայացնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

## 5. ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ, ԱՆԴԱՄՆԵՐԻ ԵՎ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

23. Խորհրդի նախագահը՝

- 1) կազմակերպում է Խորհրդի աշխատանքները.
- 2) նշանակում է նիստի անցկացման օրը և հաստատում օրակարգը.
- 3) գումարում է Խորհրդի նիստերը և նախագահում է դրանք.
- 4) կազմակերպում է Խորհրդի նիստերի արձանագրումը.
- 5) ստորագրում է Խորհրդի որոշումները/նիստերի արձանագրությունները.
- 6) ստորագրում է Խորհրդի գործունեության հետ կապված գրությունները.
- 7) ներկայացնում է Խորհուրդն այլ մարմինների և անձանց հետ հարաբերություններում.

8) իրականացնում է սույն կանոնակարգից բխող այլ լիազորություններ:

24. Խորհրդի անդամը՝

- 1) մասնակցում է Խորհրդի աշխատանքներին.
- 2) հարցեր և առաջարկություններ է ներկայացնում Խորհրդի քննարկմանը, նախապատրաստում իր կողմից ներկայացվող հարցերը.
- 3) ծանոթանում է նիստի օրակարգին և քննարկվելիք հարցերի նյութերին.

4) կարող է ծանոթանալ նիստերի արձանագրություններին, ընդունված որոշումների կապակցությամբ կարող է ներկայացնել գրավոր հատուկ կարծիք.

5) կատարում է Խորհրդի և նրա նախագահի՝ նրանց իրավասության սահմաններում տրված հանձնարարականները:

25. Խորհրդի քարտուղարը՝

1) ապահովում է Խորհրդի աշխատանքների, նիստերի, օրակարգերի, անհրաժեշտ նյութերի և որոշումների նախագծերի նախապատրաստումը և դրանց տրամադրումը Խորհրդի անդամներին.

2) Խորհրդի անդամներին, հրավիրված անձանց իրազեկում է նիստերի անցկացման օրվա մասին.

3) կազմում և ստորագրում է Խորհրդի նիստերի արձանագրությունները.

4) իրականացնում է Խորհրդի գործավարությունը և փաստաթղթերի պահպանությունը:

« ՀԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ  
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Խ.ՊՈՂՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ

